



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՂ

Ս.Բ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 1 Սեպտեմբեր 2019

126

DIMANCHE, 1 Septembre 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Գ ԿԻՐԱԿԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ

Տօն Գիւտ Գօտոյ Արքուիոյ Աստուածածնի

3^{ÈME} DIMANCHE APRÈS L'ASSOMPTION

Découverte de la ceinture de la Sainte Mère de Dieu

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹՍՅԻՆԵՐՈՒՆ

ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-11)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

(4.35-41)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 CORINTHIENS 1.1-11

MARC 4.35-41

Պատարագիչ եւ քարոզիչ / Celebrant

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովի

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը 12:00-ին

Requiem à 12h00

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organiste: M. Vahram Sarkissian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

2 ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 1.1-11

1 Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Բրիստոսի առաքեալը, ու Տիմոթէոս մեր եղբայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին եւ Աքայիայի մէջ եղող բոլոր սուրբերուն. 2 շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Տէր Յիսուս Բրիստոսէ: 3 Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի Հայրը, արգահատանքի Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, 4 որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք կարենանք մխիթարել անոնք՝ որ որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ. 5 որովհետեւ ինչպէս Բրիստոսի չարչարանքները կ'առատանան մեր մէջ, նմանապէս մեր մխիթարութիւնն ալ կ'առատանայ Բրիստոսի միջոցով: 6 Եթէ տառապիւք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է, որ արդիւնաւոր կ'ըլլայ՝ համբերելով այն նոյն չարչարանքներուն, որոնցմով մենք ալ կը չարչարուինք. ու եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: 7 Մեր յոյսը հաստատուն է ձեր վրայ, որովհետեւ գիտենք թէ ինչպէս հաղորդակից էք մեր չարչարանքներուն, նոյնպէս ալ մխիթարութեան պիտի ըլլաք: 8 Որովհետեւ չենք ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք Ասիայի մէջ մեզի պատահած տառապանքը. չափէն աւելի ծանրաբեռնուեցանք, մեր կարողութենէն աւելի, ա՛յնքան՝ որ նոյնիսկ յուսահատեցանք կեանքէն: 9 Բայց մահուան վճիռը ունեինք մեր վրայ, որպէսզի վստահինք ո՛չ թէ մենք մեզի, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ: 10 Ան այդպիսի մեծ մահէ մը ազատեց մեզ, ու կ'ազատէ. 11 Եւ կը յուսանք թէ ան տակաւին պիտի ազատէ: Դուք ալ կը գործակցիք՝ մեզի համար աղերսելով, որպէսզի շատեր շնորհակալ ըլլան մեր պատճառով՝ շատ անձերու աղօթքին միջոցով մեզի եղած շնորհին համար:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.35-41

35Նոյն օրը՝ երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց. «Եկէ՛ք ծովուն միւս եզերքը անցնինք»: 36Անոնք ալ բազմութիւնը արձակելով՝ առին զինք, քանի նաւուն մէջ էր. ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ: 37Ու հզօր փոթորիկ մը եղաւ եւ այիթները նաւուն վրայ կը խուժէին, այնպէս որ արդէն կը լեցուէր. 38Իսկ ինք՝ նաւուն ետեւի կողմը՝ բարձի վրայ կը քնանար: Արթնցուցին զինք եւ ըսին իրեն. «Վարդապէ՛տ, հոգ չե՛ս ըներ՝ որ կը կորսուինք»: 39Ուստի ելլելով՝ սաստեց հովը եւ ըսաւ ծովուն. «Դադրէ՛, լր՛ռ կեցիր»: 30Իսկ դադարեցաւ, ու մեծ խաղաղութիւն եղաւ: 40Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս երկչոտ էք. ի՞նչպէս կ'ըլլայ՝ որ հաւատք չունիք»:

2 Corinthiens 1.1-11

1Paul Apôtre de Jésus-Christ par la volonté de Dieu, et le frère Timothée, à l'Église de Dieu qui est à Corinthe, avec tous les Saints qui sont dans toute l'Achaïe; 2Que la grâce et la paix vous soient données par Dieu notre Père et [par] le Seigneur Jésus-Christ.

3Béni [soit] Dieu, qui est le Père de notre Seigneur Jésus-Christ, le Père des miséricordes, et le Dieu de toute consolation; 4Qui nous console dans toute notre affliction, afin que par la consolation dont nous sommes nous-mêmes consolés de Dieu, nous puissions consoler ceux qui sont en quelque affliction que ce soit. 5Car comme les souffrances de Christ abondent en nous, de même notre consolation abonde aussi par Christ. 6Et soit que nous soyons affligés, c'est pour votre consolation et pour votre salut, qui se produit en endurant les mêmes souffrances que nous endurons aussi; soit que nous soyons consolés, c'est pour votre consolation et pour votre salut. 7Or l'espérance que nous avons de vous est ferme, sachant que comme vous êtes participants des souffrances, de même aussi vous le serez de la consolation.

8Car mes frères, nous voulons bien que vous sachiez notre affliction, qui nous est arrivée en Asie, c'est que nous avons été chargés excessivement au-delà de ce que nous pouvions porter; tellement que nous avons perdu l'espérance de conserver notre vie. 9Car nous nous sommes vus comme si nous eussions reçu en nous-mêmes la sentence de mort; afin que nous n'eussions point de confiance en nous-mêmes, mais en Dieu qui ressuscite les morts; 10Et qui nous a délivrés d'une si grande mort, et qui nous en délivre; et en qui nous espérons qu'il nous en délivrera aussi à l'av-enir. 11Etant aussi aidés par la prière que vous faites pour nous, afin que des actions de grâces soient rendues pour nous par plusieurs personnes, à cause du don qui nous au-ra été fait en faveur de plusieurs.

Marc 4.35-41

35Or en ce même jour, comme le soir fut venu, il leur dit : passons delà l'eau. 36Et laissant les troupes, ils l'emmenèrent [avec eux], lui étant déjà dans la nacelle; et il y avait aussi d'autres petites nacelles avec lui. 37Et il se leva un si grand tourbillon de vent, que les vagues se jetaient dans la nacelle, de sorte qu'elle s'emplissait déjà. 38Or il était à la poupe, dormant sur un oreiller; et ils le réveillèrent, et lui dirent : Maître, ne te soucies-tu point que nous périssions? 39Mais lui étant réveillé, tança le vent, et dit à la mer : tais-toi, sois tranquille; et le vent cessa, et il se fit un grand calme. 40Puis il leur dit : pourquoi êtes-vous ainsi craintifs? comment n'avez-vous point de foi? 41Et ils furent saisis d'une grande crainte, et ils se disaient l'un à l'autre : mais qui est celui-ci, que le vent même et la mer lui obéissent?



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր,

Այսօր Սուրբ Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնին Երրորդ Կիրակին է եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կը շարունակէ նշել Սուրբ Աստուածամօր նուիրում տօները: Այսօր Հայաստանեայց եկեղեցիներուն մէջ կը յիշատակուի Սուրբ Աստուածածնի Գօտիին Գիւտի տօնը:

Այս տօնն ալ, սիրելի հաւատացեալներ, անմիջական պատմական կապ ունի Աստուածամօր Վերափոխման հետ: Ինչպէս Եկեղեցւոյ Սուրբ Աւանդութիւնը կը պատմէ, քանի որ Թովմաս առաքեալը ուշացած էր եւ չէր հասցուցած վերջին հրաժեշտը տալ Սուրբ Աստուածածնին, ապա միւս առաքեալները բացին այն քարայրին մուտքը, ուր դրած էին Սուրբ Կոյսի մարմինը ննջելէն յետոյ, որպէսզի Թովմասը կարենայ իր երկրպագութիւնը ընել: Սակայն գիտենք, որ Սուրբ Աստուածամօր մարմինը արդէն Երկինք վերցուած էր եւ Թովմաս Առաքեալը այդտեղէն դուրս եկաւ շատ վշտացած: Աւանդութիւնը կը պատմէ, որ Աստուածամայրը, կամենալով մխիթարել իր սիրելի Որդիին աշակերտը, Երկինքէն անոր կ'ուղարկէ իր ձեռահիւսք գօտին, որ

առաքեալը ամենայն սրբութեամբ կը պահպանէ մինչեւ իր մահը: Այնուհետեւ, ըստ անանդութեան, այս սուրբ մասունքը Երուսաղէմէն կը տեղափոխուի Կոստանդնուպոլիս եւ դարերէ ի վեր կը դառնայ անոր գլխաւոր զարդն ու հարստութիւնը: Յետագային Քրիստոնէական սուրբ մասունք հանդիսացող Մարիամ Աստուածածնի գօտին մասերու կը բաժնուի եւ կը տարուի տարբեր երկիրներ, իսկ անոր ամենամեծ կտորը կը պահուի Յունաստանի Սուրբ Լեռան վանքերէն մէկուն մէջ:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

վստահ եմ, որ բոլորդ ալ պատկերացուցիք արդէն, որ բազմաթիւ հրաշագործութիւններ ու բժշկութիւններ տեղի ունեցած են այս սրբասուրբ մասունքին շնորհիւ: Մի գուցէ լսած կ'ըլլաք նաեւ՝ անոր հրաշագործ ուժի ու զօրութեան մասին պատմութիւններ: Սակայն, եթէ պահ մը դադար առնենք ու մտածենք, ապա այդ ընդամենը առարկայ մըն է, որ ինքն իրմով ոչ մէկ հոգեւոր նշանակութիւն կրնար ունենալ: Սակայն, երբ կը յիշենք, թէ որուն կը պատկաներ այդ, ապա պատկերը ամբողջութեամբ կը փոխուի: Այդ անգին գանձ մը կը դառնայ եւ իմաստ կը ստանայ այն մարդուն շնորհիւ, որ կրած է այդ: Սուրբ Մարիամ Աստուածածինը այն միակն էր ողջ մարդկային ցեղին մէջ, որ հոգեւոր եւ բարոյական այնպիսի կատարելութեան հասաւ, որ արժանի դարձաւ մայրը ըլլալու այն Միակին, որ Երկնային Հօր ծոցէն երկիր եկաւ ու մարդացաւ Կոյս Մօր շնորհիւ: Եւ այն միակ մարդն էր, որ ննջելէն յետոյ արժանի դարձաւ իր սիրելի Որդիին մօտ վերափոխուելու: Սուրբ Աստուածածինն իր մաքրամաքուր ու խոնարհ կեանքով ծառայեց մարդկութեան փրկութեան աստուածային ծրագիրին եւ ինչպէս Եկեղեցւոյ հայրերէն մէկը իրաւացիօրէն կը նշէ. «Ճշմարտապէս երկրային երկինք» դարձաւ: Մարդկութիւնը հազարամեակներէ ի վեր իր Փրկիչին գալստեան կը սպասէր եւ Սուրբ Կոյսի շնորհիւ միայն Աստուած այս մեղաւոր աշխարհը եկաւ, որպէսզի մեղքերուն մէջ

խեղդուող մարդը վերջապես կենարար օդը շնչելու հնարա-
ւորութիւն ունենայ: Ինչպէս մօտ երկու հազարամեակ առաջ
Սուրբ Մարիամ Աստուածածնի դերը վճռական եղաւ
մարդկութեան փրկութեան հիմքը դնելու հարցին մէջ,
այնպէս ալ մինչեւ այսօր եւ այսուհետեւ ալ Աստուածամայրը
գլխաւոր բարեխօսն է Տիրոջ առջեւ ողջ մարդկութեան
համար:

Երբ Աստուածամայրը իր գօտին Թովմաս Առաքեալին եւ
Նմանապէս ողջ մարդկութեան ուղարկեց՝ որպէս մխիթ-
արութիւն, կարծես թէ անոր հետ կամեցաւ յիշեցնել մեզի իր
սիրասուն Որդիին պատուիրանը, որ տուաւ ըսելով. «Թող
ձեր գօտիները մէջքերնիդ պնդուած ըլլան» (Ղուկ. 12:35):
Այս պատուիրանով Տէրը նշանաւորեց ժուժկալութեան կամ
չափաւորութեան շնորհքի կարեւորութիւնը: Եւ Աստուա-
ծամօր ողջ կեանքն ալ ժուժկալութեան հրաշալի օրինակ մը
եղաւ բոլորիս համար: Սուրբ Գիրքը կրկին ու կրկին կը
յիշեցնէ մեր մեղաւոր բնութիւնը, թէ որքան կարելոր է
չափաւորութիւնը, որ մշտապէս կը դժուարանանք գտնել ու
պահպանել: Ինչ ասպարեզի մէջ ալ, որ այդ դրսեւորուած
ըլլայ, սիրելի հաւատացեալներ, մեզի միայն օգուտ կը բերէ,
որովհետեւ աստուածահաճոյ է եւ պատուիրուած Աստուա-
ծորդիին կողմէ: Երբեմն, կարծես թէ անմեղ զրոյցի մը
բռնուած ենք, սակայն չենք նկատած Նոյնիսկ, թէ ան ինչպէս
կը վերածուի շաղակրատութեան: Կը լռենք, որպէսզի լսենք
միայն, սակայն կ'աղտոտենք մեր միտքն ու հոգին այդ
բոլորով, ինչ որ պէտք չէր, որ լսեինք: Երբ չենք չափաւորեր
մեր տեսողութիւնը, ապա մեր սիրտը կը թունաւորենք
անբարոյութեան, բռնութեան կամ այլ արատաւոր
տեսարանով մը: Երբ կը թերանանք կերակուրի չափա-
ւորութեան մէջ, ապա այդ մեզի ո՛չ թէ ուժ ու եռանդ կը
պարգեւէ, այլ՝ ծանրութիւն ու ծուլութիւն: Նոյնիսկ պարզ ու
հասարակ թուող երեւոյթ մը, ինչպիսին է քունը, որ
Աստուծոյ կողմէ տրուած է չափաւորութեան պարագային
բժշկելու ու թարմացնելու մեր մարմինները ու միտքը, չափը
խախտելու պարագային կը յառաջացնէ կամ նեարդային

լարուածութիւն ու տարատեսակ խանգարումներ, կամ ալ թուլութիւն եւ ուղեղի մթագնում:

Այսինքն, սիրելի քոյրեր ու եղբայրներ,

այն բոլոր հրաշալի միջոցները, որ Աստուած պարգեւած է մեր երկրային կեանքի պահմանման համար, մենք ի չարս մեզի կը գործածենք:

Արդ, սիրելիներ, թող Ամենասուրբ Կոյսի գօտին, որուն գիւտի տօնը կը նշենք այսօր, յիշեցում ըլլայ մեզի Յիսուս Զրիստոսի պատուիրանին, որպէսզի մեր սիրտերը մաքուր պահենք այս աշխարհի կիրքերէն ու ցանկութիւններէն, քանի որ այս աշխարհը անցողիկ է, իսկ մենք կը ձգտինք անոնց, յաւիտենական կեանքի քաղաքացիները ըլլալու: Եւ ինչպէս միւս պարագաներուն, այս պարագային եւս անկարող ենք չափաւորութեան առաքիւնութեան մէջ յառաջդիմել՝ առանց Երկնային Տիրոջ օգնութեան: Իսկ անոր համար անհրաժեշտ է աղօթքը, սիրելի քոյրեր եւ եղբայրներ: Ի սրտէ եղած աղօթքն է, որ կը բանայ փակ դռները, յոյս կու տայ անյուսալի թուող իրավիճակներուն, կը բուժէ անբուժելի վերքերն ու կեանք կը պարգեւէ մեզի: Այդ պատճառով է որ Երանելի Կոյսը անդադար կ'աղօթէ իր երկրային զաւակներուն դարձին ու փրկութեան համար եւ սքանչելի օրինակ կը հանդիսանայ աղօթքին մէջ յարատելելու համար: Աղօթքը միակ կենդանի կապն է մեր ու մեր Երկնային Հօր միջեւ: Ան սիրտին կը սորվեցնէ երկնային ճշմարիտ ու յաւիտենական կերակուրը ճաշակել: Կը յիշեցնէ հոգիին, որ աշխարհիկ թուող վայելքներն ու հարստութիւնները իրենը չեն, այլ ինքը Երկնային Արքայութեան բնակիչ է, մասնիկը Արարիչ Աստուծոյ: Խոնարհ սիրտով եղած աղօթքը երբեք անպատասխան չի մնար: Ան Երկնային Հօր ուշադրութիւնը՝ կ'ուղղէ դէպի Իր խոնարհ զաւակի աղերսն ու Բարեխնամ Մօր բարեխօսութիւնը՝ կը ստանայ Ամենագոր Արքայի առջեւ:

Եթե խորունկ մտածենք, սիրելի հաւատացեալներ, ապա կը համոզուինք, որ չափաւորութեան առաքինութեան մէջ յառաջդիմած մարդն է, որ ամէն ինչի մէջ համ կը զգայ: Եթե մենք չափաւոր կերպով գործածենք Աստուծոյ տուած պարգեւները, ապա միայն կը շահինք անկէ: Ձեռք կը բերենք Զրիստոնէական իմաստութիւն, որ այդ կ'օգնէ մեզի ընտրելու այս խաւար աշխարհէն միայն ամենալուսաւորը, բարին ու փրկչականը: Չափաւորութեան հասած մարդն է, որ գիտէ շնորհակալ ըլլալ Աստուծոյ ամէն ինչի համար եւ ան է, որ կը կարողանայ ուրախանալ թէ՛ գարնանային առաջին բողբոջներով, եւ թէ՛ աշնանային մարող արեւի նուազ ճառագայթներով: Այդպիսի մարդը կը կարողանայ փառաբանել Աստուծոյ այնպիսի իրավիճակներուն, երբ ուրիշները միայն կը յուսահատին ու կը տրտնջան: Այդ մասին կը գրէ Պօղոս Առաքեալը Փիլիպեցիներուն ուղղուած իր նամակին մէջ. «Զանի որ ես սորված եմ գոհ ըլլալ իմ վիճակէս: Գիտեմ զրկանքով ապրիլ, գիտեմ առատութեան մէջ ըլլալ: Ամէն ինչին մէջ, բոլոր պայմաններուն տակ, սորված եմ թէ՛ կուշտ ըլլալ, թէ՛ քաղցած մնալ, թէ՛ առատութեան մէջ ըլլալ, թէ՛ զրկանք կրել: Ամէն ինչի կարող եմ անոր՝ շնորհիւ, ով զիս զօրացուց» (Փիլիպ. 4:11-13):

Արդ, սիրելիներ, կը մաղթեմ, որպէսզի Սուրբ Աստուածամօր գօտին մեզի եւս միտարութիւն պարգեւէ եւ ի յիշատակութիւն ըլլայ Յիսուս Զրիստոսի հաւատքով ու առաքինութիւններով գօտեւորուելու, յառաջդիմելու Աստուծոյ շնորհներուն մէջ ու մեր գործերով արժանանալու այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Օրհնութեամբ՝
Տէր Դաւիթ Զահանայ Մարգարեան

Շարժումայ խորհրդածութիւնը

Ով որ կը նեղացնէ, մի գայրանար: Անունը գիտես, աղօթէ: Աղօթքը ամենամեծ ուժն է, որ կը փոխէ մարդուն բախտը: Այս աշխարհի վրայ չկայ գորութիւն, որ առաւել կ'ազդէ մարդու կեանքին վրայ, քան աղօթքը:

Հայր Նիքոլայ Գուրյանով

«Աստուած իմաստութիւնը, գիտութիւնը եւ ուրախութիւնը կու տայ այն մարդուն, որ հաճելի է իր առջեւ, իսկ մեղաւորին կու տայ հաւաքելու եւ դիզելու հոգ, որպէսզի ան ձեռք բերածը տայ այն մարդուն, որ հաճելի է Աստուծոյ առջեւ» (Ժողովոր):

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- Եկէք ապրինք այնպէս, որպէսզի նոյնիսկ գերեզմանափորը սգա մեր մահը:

Մարգ Տվեն

- Երիտասարդութեան տեսանկիւնէն կեանքը՝ այդ անվերջ ապագայ է, ծերութեան տեսանկիւնէն՝ շատ կարճ անցեալ:

Արթիւր Շոփէնհաուրը

- Երբեք մի վիճիք յիմարի հետ՝ մարդիկ կրնան չնկատել ձեր միջեւ եղած տարբերութիւնը:

Ռէնպէրնի կանոնը



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ՃԱՄԲՈՐՈՒՄԵԼԷՆ ԱՌԱՋ

Տէ՛ր, խաղաղութեան
ճամբաներուն մէջ պահէ մեր
քայլերը: Տէ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ՝
մեզ եւ բոլոր քեզի հաւատացողները,
որպէսզի դէպի խաղաղութիւն եւ
յաւիտենական կեանք երթանք:
Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն
պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն
առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան
քու ճամբաներէդ քայլնք եւ քու
ողորմութեամբդ հասնինք կեանքի եւ
փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ
դուն ես մեր օգնականը եւ փրկիչը:
Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու
պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն:

PRIÈRE AVANT DE PARTIR EN VOYAGE

Ô Seigneur, dirige et conduis nos âmes et
les âmes de tous les fidèles, et fais-les
marcher dans la justice vers la vie éternelle.

Ô Christ, notre Dieu, créateur de la vie et
donneur de paix, conduis-nous afin que nous
puissions marcher dans ta justice et parvenir
au port de la vie et du salut en paix, par la
grâce de ta miséricorde.

Parce que tu es notre soutien et notre
Sauveur, et à toi reviennent la gloire, la
puissance et l'honneur, maintenant et
toujours, et dans l'éternité de
l'éternité. Amen.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019



Տ. եւ Տիկ. Կարպիս եւ Յասմիկ Արոշեանի,
Եւ համայն Տէր Թաթևոսեան ընտանիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ քրոջ՝

**ՇԱՔԷ ՏԷՐ ԹԱԹԷՆՍԵԱՆԻ
(CHAKE DER TATEOSSIAN)**

(մահացած Աւստրալիա)

Մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ)



Տ. եւ Տիկ. Ղազար եւ Յասմիկ Մէթի,
Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Երանուհի Արսլանի,
Տ. եւ Տիկ. Արեթ եւ Ճէյն Մէթի եւ զաւկին,
Տ. եւ Տիկ. Ալէն եւ Նաթալի Տրդատեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ քրոջ, հօրաքրոջ եւ
հարազատին՝

ԷԼՄԱՍ

ՄԷԹ - ՓՈԽԱՆԵԱՆԻ

(ELMASD MET-POKHANIAN)

(մահացած Ֆրանսա)

Մահուան 40-ին առիթով
Ինչպէս նաեւ՝
Իրենց սիրեցեալ մօր եւ եղբօր՝
ԱՆՆԱ ՄԷԹԻ
(ANNA MET)

Մահուան 17-րդ տարելիցին առիթով
Եւ

ՄԱՆՈՒԿ ՄԷԹԻ
(MANUK MET)

Մահուան 41-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ

ԿԷՕՆՃԵԱՆ, ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ ՄԱԶՄԱՆԵԱՆ
Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ
(Սուրճի սպասարկութիւն «Մարի Մանուկեան»
սրահին մէջ)



Տիկ. Լիւսի Այնաճեանի,
Պրն. Գրիգոր Այնաճեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԱՐԹԻՆ ԱՅՆԱՃԵԱՆԻ
(ARTIN AYNADJIAN)

Մահուան 9-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

ԱՅՆԱՃԵԱՆ ԵՒ ԱԲՈՇԵԱՆ
Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Տիրուհի Տրդատեանի,
Տիկ. Էմմա Գալուստեանի,
Տիկ. Հելէն Մելքոնեան Գալայճեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ հարազատներուն՝

ԺԱՆ ՏՐԴԱՏԵԱՆԻ
(JEAN DERTADIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ
(DN. ONNIK KALOUSTIAN)

Մահուան 6-րդ տարելիցին առիթով
ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ
(DIKRAN KALAYJIAN)

Մահուան 20-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

**ԳԱԼԱՅՃԵԱՆ, ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՏՐԴԱՏԵԱՆ,
ՊԱՐՈՆԻՔ, ԿԷՕՆՃԵԱՆ, ՄԵԼՔՈՆԵԱՆ
ԵՒ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ**

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



Պրն. Արեթ Սեօնմէզի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ՎԱՀԱՆ ՍԷՕՆՄԷԶԻ
(VAHAN SONMEZ)

Մահուան 5-րդ տարելիցին առիթով



ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՆՅԻՈՅ

**DON
A L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH DONATIONS

FOR THE PERIOD OF: JULY 29 - AUGUST 27, 2019

RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:

Church Exterior Walls Fundraising Renovation

Offline donations New Donators:

Mr. & Mrs. Armen & Hermine Bechakjian \$2000

Mr. & Mrs. Vatche & Ani Bechakjian \$2000

Mr. Manvel Markosyan, \$1000

Mr. & Mrs. Onnik & Mari Pilafian \$1000

Mr. Krikor Marounian \$500

Mr. Gilles Lavigne \$500

Mr. & Mrs. Roupen & Meline Arsever \$500

Mr. & Mrs. Ara & Ani Bakirciyan (California) \$500

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$300

Mr. Carik Mikhielian \$200

Mrs. Sonia Kalpakdjian \$100

Mr. & Mrs. Garo & Nuvart Paragamyian \$100

Mr. & Mrs. Arakel & Alice Arakelian \$100

Mr. Aret Tasciyan \$100

Mrs. Silva Karaoghlanian \$60

Mr. & Mrs. Varoujan & Silva Mangassarian \$50

Online Donations New Donator:

Mrs Ofelia Gulsadian \$147

Offline donations Total - \$22,245/ Online donations Total: \$4562

Renovation Fundraising Presently - Grand Total: \$26,807

We appreciate all our previous and new donators' efforts that have been put into action to make our church future truly bright & our Lord's House a prosperous place for all our prayers. Thank you very much for your support and generosity!

FOR ONLINE DONATIONS PLEASE CLICK TO THE LINK

<https://bit.ly/2YcCyT9>

CHURCH:

Mrs. Jeanet Vartazarmian \$200, Mr. Arto Manoukian, Mr. Hayk Yassa, Mr. & Mrs. Ardash Ortaaslan, Mr. & Mrs. Luckhwinder Singh & Lusine Ayvatsyan \$100, Mr. Frank-Raci Altan, Mr. Edward Minnetian \$50, Mr. Garabed Asarian \$20.

CHURCH HOLY ALTAR CURTAINS:

Mrs. Chake Gunjian \$2500

HOLY ALTAR FLOWERS:

Mrs. Anoush Keoprulian \$100

"KOMITAS" TBRATZ TASS:

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$40

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ARSHALUYS KAMBOURIAN:

Mrs. Perguhi Meremetci \$75, Mrs. Arshalouys Bagdassarian, Mr. & Mrs. Mihran & Helen Tonikian, Mrs. A. Kolyazlian, Mr. Zarife Zakher, Mr. Antoine Koloyan \$50, Mr. Krikor Dikranian, Mrs. Meline Arsever \$30, Ms Marie Yesayan, Mrs. Maro Yacoubian, Mrs. Lucie Hadjian, Mr. Abraham Karaoghlanian, Mr. & Mrs. Toros & Aida Keskinbicak \$20.

THE LATE ARAXIE HAKIMIAN:

Mrs. Houry Hakimian & the Children \$500, Mr. & Mrs. Gerard & Adelaide Djerrahian, Mr. Sako Liberian \$250, Mr. & Mrs. Vahe & Sossie Ortchanian, Mr. & Mrs. Yeghia & Lisa Hakimian, Nayiri & Nanor Boyajyan Sisters \$200, Mr. & Mrs. Jirair & Houry Zakarian, Mr. & Mrs. Bedros & Lizette Tcherkezian, Mr. & Mrs. Armand & Suzanne Kazandjian, Mrs. Mariejean Der Torossian, Mr. Edouard Husseindjian, Mr. Raffi Sabbaghian & Sona Sabbaghian, Malikyan Family, Mr. & Mrs. Arden & Christine Dervishian, Mr. & Mrs. Mark Dervishian \$100, Mr. Berj Redjebian \$60, Mrs. Nina Ortchanian, Mr. H. Larayan, Mr. & Mrs. Sarkis & Maggie Armoudian, Mr. & Mrs. Berdj Tchakedjian, Mr. Raffi Frengul, Mr. Garo Hakimian, Mrs. Sonia Bouladian Ortchanian, Mr. & Mrs. Vatche & Seta Tavrizian, Mr. & Mrs. Stefan & Katya Setian, Ms Annie Bedrossian, Mr. Kevork Keusseyan, Dr. & Mrs. Archavir & Nadia Gundjian, Mrs. Magda Zakarian, Mr. & Mrs. Varoujan & Hasmig Margossian, Mrs. Annie Yerevanian, Children's Fund (CFFA) \$50, Mr. Hagop Redjebian, Mrs. Lena Beudjekian, Mrs. Rita Ohanian, Mr. Hampig Djabourian, Mr. Sevag Joukakelian & Family, Her Friends \$40, Mr. & Mrs. Garbis & Silva Ferah, Mrs. Suzanne Souvalian \$25, Mr. Dikran Husseindjian, Mr. Bedros Yeramian \$20.

THE LATE DR. SETRAK KRIKOR

(GREG) GEUKJIAN:

Mrs. Nadia Geukjian \$400, Mr. Robert Ritchie \$100, Mr. Philip Lepine \$50, Mrs. Gisela Duben \$25, Mr. Alexis Iverson \$20.

HOKEHANKISD:

THE LATE GARABEDIAN:

Mrs. Silva Karaoghlanian \$20

THE LATE MARKAR DIRADOURIAN:

Mr. & Mrs. Garo Garabedian \$100, Mr. & Mrs. Varoujan & Hasmig Margossian \$70,
Mrs. Haygouhi Diradourian, Mr. & Mrs. Ayk Kirmoyan \$30.

THE LATE JOSEPH EGOYAN:

Mr. & Mrs. Garabed & Sonia Kalemajian, Mrs. Aline Egoyan, Mr. Stepan Egoyan,
Mr. Ara Egoyan, Dr. & Mrs. Henry & Marie Pederian, Mr. & Mrs. Stephen &
Viviane Ibishian \$100.

THE LATE AVEDIS MISSISSIAN:

Mr. Joe Morena \$500

THE LATE DORAMAJIAN FAMILY:

Mr. & Mrs. Nerses & Rachel Doramajian \$200, Mr. & Mrs. Hovsep Doramajian \$150,
Mrs. Anoush Doramajian \$50

THE LATE KEVORK BARONIAN:

Mrs. Sonia Baronian \$25

THE LATE ARTOKUN, ZAFIRIAN,

& SANTIKIAN FAMILIES

Mrs. Seta Artokun \$75

THE LATE LUSI ESMEZYAN:

Mrs. Elizabeth Mirican \$150, Miss Lega Esmezyan \$100, Mr. Yakup Inak, Mrs. Anna
Inak \$50, Mr. & Mrs. Roger Zaven Gudsuz \$40, Mrs. Cicek Tasciyan \$20

THE LATE VERONICA KRİKORIAN

Miss Takouhi Krikorian \$100, Mr. Yeghis Atamian, Mrs. Mariet Gharibian, Mr.
Freda Tasciyan \$20

THE LATE VAHAN SONMEZ:

Mr. Aret Sonmez \$100

BLESSING OF GRAPES:

Mr. & Mrs. Kevork & Maral Partamian \$120, Miss Hermine Mekhgeavakian, Mr. &
Mrs. Minas & Verjine Asaduryan, Mrs. Rachel Doramajian, Mr. & Mrs. Levon
Senoglu, Mrs. Caroline Kazan \$100, Mr. Avedis Atamian \$60, Mr. & Mrs. Hovsep
Doramajian, Mrs. Irma Asiciyan, Mr. Levon Simonyan, Mr. & Mrs. Manouk
Jamgotchian, Mr. & Mrs. Agop Mercimekogu, Mr. & Mrs. Herman Odabasciyan,
Mr. & Mrs. Nazaret Sahakyan, Mr. & Mrs. Diran Attarmigiroglu, Mr. & Mrs. Sokrat
Bilenler, Mr. & Mrs. Garabet Tokmancian, Mr. & Mrs. Hagop Kazan, Mr. Anto
Akcakiryan, Mr. & Mrs. Raffi Frengul, Mr. & Mrs. Oskan Hazarabedian \$50, Mrs.
Hilda Kepekci, Mrs. Marie Asdghig Yazedjian \$40, Mr. & Mrs. Krikor Dikranian,
Mrs. Pergruhi Meremetci \$30, Mrs. Kohar Topalian, Mr. & Mrs. Avedis & Marie
Basmacioglu \$25, Mr. Jirayr Gazeyan, Miss Takouhi Aghazarian, Miss Shoushan
Aroyan \$20.

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՅՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ**

ՍԵՊՏԵՄԲԵՐ – SEPTEMBRE

**2, Երկուշաբթի – Տօն Սրբոցն Ստեփանոսի Ուլնեցոյն,
Վկայիցն Գոհարինեայ, Ծամիդոսի, Տուքիկոսի եւ
Ռատիկոսի**

*Lundi 2 – Fête de St Etienne Oulnétsi, des martyrs Koharin,
Dzamitos, Doukigos et Radigos*

**3, Երեքշաբթի – Տօն Սրբոցն մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի
եւ Զաքարիայի՝ Հօրն Յովհաննու Մկրտչի**

*Mardi 3 – Fête des Saints prophètes Ezéchiél, Ezras et de
Zacharie, père de St Jean-Baptiste*

4, Չորեքշաբթի – Պահք

Mercredi 4 – Jeûne

**5, Հինգշաբթի – Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին
եւ Յորայ արդարոյն**

Jeudi 5 – Fête de Jean Précurseur et du juste Job

6, Ուրբաթ – Պահք

Vendredi 6 – Jeûne

7, Շաբաթ – Տօն Նիկիոյ Սուրբ Ժողովոյն (325)

Երեք հարիւր տասն եւ ութ հայրապետացն

Samedi 7 – Fête du St Concile de Nicée (325)

et de ses 318 patriarches



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN

ԿԻՐԱԿԱՄԱՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 31 Օգոստոս 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի կատարուի
Մոնթրէալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



ՏՕՆ ԽԱԶՎԵՐԱՅ

FÊTE MAJEURE DE L'EXALTATION DE LA
SAINTE CROIX



ՏԱՂԱԲԱՐ ՏՕՆԻ Ս.ՊԱՏԱՐԱԳ
LA SAINTE MESSE DE LA FÊTE
MAJEUR



Կիրակի, 15 Սեպտեմբեր 2019
առաւօտեան ժամը 10:30-ին

Dimanche, 15 Septembre 2019 à 10:30

Առաւօտեան ժամերգութիւն	09:30	Service Matines à	09:30
Սուրբ Պատարագ	10:30	La Sainte Messe	10:30
Ռեհանի Օրհնութիւն	12 – 12:30	Bénédiction de basilic	12 -12 :30

Պատարագիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:
REV. FR. DAVID MARGARYAN
Յաւարտ Ս. Պատարագի
Նախաձեռնութեամբ՝
Երիտասարդաց «Կամար» Միութեան
տեղի պիտի ունենայ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

À l'issue de Sainte Messe,
UN CONCERT DE CHARITÉ
sera organisé par
l'Union Jeunesse GAMAR
à la salle 'Marie Manoogian' de l'église.

Հրաւեր մեր բոլոր հաւատացեալներուն:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ «ԿԱՄԱՐ» երիտասարդաց միութիւնը

սիրով կը հրաւիրէ մասնակցելու տաղանդաշատ հայրենակից՝

Ա Ր Փ Ե Ն Ի Կ Ի Ն Ե Ի Ա Ն Ո Ր Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ո Ւ Ն

բարեգործական համերգին, որուն հասոյթը պիտի յատկացուի

Եկեղեցւոյ վերանորոգչական հիմնադրամին

Հայկական եւ Ամերիկեան ճազ կատարումներ, իտալական երգեր, ճազի եւ ժողովրդական երգի համատեղում Անուշեղէնի հիւրասիրութիւն եւ ջերմ մթնոլորտ:

Կիրակի, 15 Սեպտեմբեր
Ժամը 13:30

«Մարի Մանուկեան» սրահ

Մանրամասնութիւններու եւ գրանցման համար
կը խնդրենք հեռաձայնել.- (514) 279-3066 քարտուղարութիւն

(514) 928-2536 Գագիկ

(514) 792-2866

Փառանձեմ

*Arpenik
love @ last*



**L'Union de jeunesse "G A M A R"
de l'Eglise Apostolique
arménienne Saint-Grégoire l'Illuminateur**

**Vous invite avec plaisir à participer au concert
de charité de notre talentueuse compatriote**

ARPENIK ET DE SES AMIS

**Performances de jazz arménien et américain, chansons italiennes et
combinaison du jazz et de la chanson folklorique.**

Des friandises seront offertes et il y aura une ambiance chaleureuse.

**Dimanche, Le 15 septembre
à 13:30**

Salle «Marie Manoogian»

Les dons faits lors du concert seront dédiés à la rénovation de l'église

Pour plus de détails et l'inscription s'il vous plaît appelez: (514) 279-3066 Secrétariat

(514) 928-2536 Gagik

(514) 792-2866 Parandzem



Յարգելի՜ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին Նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթբէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը Նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Ծախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմուհք):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացքներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկ պարագային ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի Նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098

